

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.Զ.Գ.Ա.Ց.Ի.Ն ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ

16 ՅՈՒՆԻՍԻ 1945 թ. և Ա. ԷջՄԻԱՄԻՆ

ՆԻՍՏ Է.

25 ՅՈՒՆԻՍԻ 1945 թ.

Ազգային-Եկեղեցական ժողովի է. նիստը բացուեց ժամը 1 և 30 բոպէին տէրունական աղօթքով, նախագահութեամբ նորին Ա. Օծութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գէորգ Զ-ի: Ատենապետն էր ակադեմիկոս Աւետիք Խաչակեանը:

Կարգագութեցին նախորդ երկու նիստերի արձանագրութիւնները և փոքր ուղղումներից յետոյ հաստատուեցին ժողովի կողմից:

Այնուհետո ժողովի անցաւ օրակարգի առաջին խնդրին — Հայ Եկեղեցու Սահմանադրութեան քննութեանը և վաւերացմանը:

Վեհափառ Հայրապետ Գէորգ Զ. ժողովի ուշագրութիւնը հրաւիրեց հետևեալի վրայ:

«Հայ Եկեղեցու Սահմանադրութեան քննութիւնն ու վաւերացման պէտք է կատարուի այսօր: Սակայն կարեոր է նկատի առնել, որ Հայ Եկեղեցու Սահմանադրութեան ոոյն նախագիծը պայան խորհրդակցութեան արգելնք չէ, այլ անհատական գործ, ուստի և պակասաւոր: Այլ և երբ բարոյական ըմբռնումները վերածւում են իրաւականի, ինչպէս այստեղ, նրանք միշտ զիմարանութեան առարկայ են գտանում: Վերոյիշեալ հանգամանքները պիտի թելադրեն ժողովին նախագիծը քննարկելիս խստապահանջ չլինել, և ճանաչելով այն ժամանակաւոր, յաւագոյնն ու կատարեալը կազմելու ուղին հարթել»:

Սահմանադրութեան Գրիգոր Մ. Վարդապետը կարգաց Հայ Եկեղեցու խմբագրուած Սահմանադրութեան նախագիծը: Հոգեւորական և աշխարհական պատգամաւորները կարծիքների փոխանակութիւն ունեցան, որից յետոյ ժողովը միաձայն ընդունեց Վեհափառ Հայրապետի հետևեալ առաջարկը:

«Նկատի ունենալով որ Հայ Եկեղեցու Սահմանադրութեան մէջ արձարծուած միասնականութեան գաղափարը, ինչպէս նաև Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռի և պատրիարքական զոյց աթոռների ու Մայր Աթոռի փոխյարաքերութիւնների խնդիրը ենթարկուել են եպիսկոպոսական նախապատրաստական ժողովի քննութեան և այդ առթիւ որոշ համաձայնութիւն է կայացել, այլև նկատի ունենալով, որ միասնականութեան գաղափարը նոր է հանդէս գալիս և որ նշուած աթոռների փոխյարաքերութիւնները արգէն իրաւական բնոյթ են ընդունել Սահմանադրութեան նախագիծի մէջ, որ շատ գժուարին գործ էր, ինչպէս նաև նկատի ունենալով, որ ներկայ նախագիծը վերջնական չէ և Ամենայն Հայոց Կաթողիկոսի յատուկ կոնդակով առաջարկուելու է ի ժամանակաւոր գործածութեան, և որը Եկեղեցական հաստատութիւնների, Եկեղեցական մարմինների ու մամուլի քննարկման ենթարկուելուց յետոյ յաջորդ Ազգային-Եկեղեցական ժողովում պէտք է քննարկուի ու հաստատուի վերջնականապէս: ուստի առաջարկուելու է Հայ Եկեղեցու Սահմանադրութեան սոյն նախագիծն այժմ ընդունել անփոփոխ:

Կարճատես ընդմիջումից յետոյ նիստը վերսկսուեց:

Առենապետ Աւետիք Խաչակեանը կարգաց. Կ. Պոլսի պատգամաւորներ Երուանդ Խնձյանի և Թորոս Ազատանի ներկայացրած հետեւալ խնդրագիրը:

«Նկատի ունենալով, որ Թիւքքիայից Եկած պատգամաւորութիւնն իր կամքից անկախ պատճառներով չկարողացաւ ժամանակին հասնել կաթողիկոսական ընտրու-

թեսնը, և որ միը պատգամաւորութեան միակամ ընտրելին, որպէս արժանաւորագոյն թեկնածու, զեռ Հայաստան ժամանելուց առաջ էլ հանգիսանում էր Տ. Տեղակալը, խնդրում ենք Ազգային-Եկեղեցական ժողովին որ մեր պատգամաւորութեան փեց ձայները միացուեն Վեհափառ Տ. Տ. Գէրգ Զ. Սրբազն Կաթողիկոսին ընտրող 110 ձայներին և այս պարագան նշուի ժողովի արձանագրութեան մէջ»:

Ժողովը միաձայն ընդունեց այս խնդիրը:

Հալէպի պատգամաւոր Արշակ Գալէմբերեանը, որը հիւանդութեան պատճառով չեր ներկայացել Հայրապետական ընտրութեանը, խնդրեց ժողովին, որ իր ձայնն էլ աւելացուի Ամենայն Հայոց Հայրապետի օգտին տրուած ձայներին:

Ժողովը միաձայն ընդունեց նաև այդ խնդիրը:

Նորին Ս. Օծութիւն Վեհ. Հայրապետը ժողովին առաջարկեց ընտրել մի յանձնաժողով՝ Սովետական Միութեան Մարշալ և ժողովուրդների հանձնարեղ Առաջնորդ ԱՏԱԼԻՆԻՆ ուղարկուելիք ուղերձի տեկսուր մշակելու համար Կարծիքների փոխանակութիւնից յետոյ Տանն կիլիկիոյ Կաթողիկոսի առաջարկով որոշուեց նախագահութեանը և ատենապետութեանը յանձնարարել ուղերձի մշակումն ու խմբագրումը յաջորդ նիստին ի հաստատութիւն ներկայացնելու համար:

Այսուհետեւ ժողովն անցաւ օրակարգի յաջորդ Կարցին՝ Գոգեոր Խորհրդի ընտրութեանը:

Կարգացուեց Գերագոյն Հոգեոր Խորհրդի անդամութեան համար նախագահութեան և ատենապետութեան կողմից առաջարկուած թեկնածուների հետեւել ցանկը. հոգեռականներից՝ Տ. Ռուբէն Մ. Վրդ. Դրամբեան, Տ. Վահան Մ. Վրդ. Կոստանեան, Տ. Ներսէս Մ. Վրդ. Արքահամեան, Տ. Եղիշէ Վրդ. Յարութիւնեան, Տ. Կարապետ Մ. Վրդ. Թումանեան (անձնափոխանորդ). աշխարհականներից՝ ակադեմիկոս Մտեփիան Մալխասեան, գասահօս Մինաս Մինասեան, պրոֆ. Աշոտ Արքահամեան, և Հոգեոր Ճեմարանի ապագայ տեսուչը Մտեփիան Կամսարական (անձնափոխանորդ). Ժողովը միաձայն որոշեց հաստատել Հոգեոր Խորհրդի վերոյիշեալ կազմը՝ Պրոֆ. Աշոտ Արքահամեանը շատ զբանապետ լինելու և հիւանդութեան պատճառով հրաժարուեց Գեր. Հոգեոր Խորհրդի անդամ լինելուց. նրա փոխարքն ընտրուեց ներուան Շահագիզը:

Ամերիկան Արեւելեան թեմի առաջնորդ Տ. Տիրան Մ. Վարդապետի այն հարցման, թէ ժողովը քննութեան պիտի առանի Եկեղեցու քարեկարգութեան հարցը, Վեհափառ Հայրապետը պատասխանեց, թէ իր քառամեայ տեղակալական գործունեութեան մասին կարգացած զեկուցման մէջ արդէն յայտարարել է Ազգային-Եկեղեցական ներկայ ժողովի բարեկարգութեան հարցով զբագլութիւնը հնարաւորութիւն չունենալը թէ ժամանակի սղութեան և թէ այլ պատճառներով:

Ատենապետը յայտարարեց, թէ Լոստոնի և Արքահամեան Տրուստի պատգամաւոր Սարգիս Քիւրքնեանն իր կնքահայրութեան (Հայրապետական օծման) առիթով նուրիում է 2000 (երկու հազար) անգիւական ոսկի Մ. Էջմիածնին՝ վանքում մեղուարութարան կազմակերպելու նպատակով, որը պիտի կոչուի «Նարգուհի-Նազարէթ Քիւրքնեան մեղուարութարան», ի յիշատակ իր հանգուցեալ մօր նարգուհիի ժողովը ծափահարութեամբ իր գոհունակութիւնը յայնեց նուրիատուին:

Տ. Ներսէս Մ. Վրդ. Արքահամեանը Վեհ. Հայրապետի հրամանով կարգաց ՍՍՈՒ ժողոմագետին կից կրօնական պաշտամունքների գործերի Խորհրդի նախագահ ի. Վ. Պոլենակու հետեւել նամակի թարգմանութիւնը ուղղուած ն. Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետին:

Ամենայն Հայոց Շայրազոյն Պատրիարք Կարողիկոս
Գէմութ Զ. ին

ԱՍՊԵԿՏԱԿԱՆ ՍՈՐԳԻԼԻՍՏՈՎԱԿԱՆ ԲԵՍԱՊՈՒՐԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱռԱՎԱՐՈՒԹԵԱՆ անդունից և իմ կողմից չնորհաւորում եմ Զեզ, Հայոց Եկեղեցու պետ ընտրուելու առթիւր ՎԿԱՍՈՎ Եմ, որ Զեզ իմաստուն զեկավարութեամբ Հայոց Եկեղեցին նոյնպիսի յալուսթեամբ, ինչպէս Հայրենական պատերազմի ընթացքում, կը լուծի Եկեղեցու պատերազմ պատասխանու ինդիրիները:

«Սովետական Սոցիալիստական Ռեսովուրլիկաների Միութեան կառավարութիւնը յանձնարարել է ինձ՝ Ձեզ յանձնել իրեւ նուէր մէկ մարդատար ավտոմեքենայ «Զիս 101»։ և ՄԵծ բաւականութեամբ կատարում եմ նման հաճելի յանձնարարութիւնը։»

Ձեզ անկեղծ յարգող ՊՈԼԵԱՆՍԿԻ

24 Յանվարի, 1945 թ.

Երեւան

Նամակն ընդունուեց խանդավառութեամբ և որոտընդոստ ծափահարութիւններով այս աննախընթաց համակրանքի համար։

Ժամը 3 և 15 րոպէին գաղաք յայտարարուեց մինչեւ երեկոյեան ժամը 7 և 45 րոպէին։

Աղջային - Եկեղեցական ժողովի նխութը վերսկսուեց երեկոյեան ժամը 7 և 45 րոպէին նախագահութեամբ նորին Ս. Օժութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի։ Ժողովի ատենապետն էր ակադեմիկոս Աւետիք Խոսհակեանը։

Վեհափառ նախագահը յայտարարեց հետեւեալը։

«Ուրախութեամբ պէտք է յայտարարեմ, որ մեր ժողովին ներկայ է ազգային բարերար Թէհրանի թեմի պատգամաւոր Ռուման Պոլտանի Բասեւը, որը Թէհրանում կառուցել է մի եկեղեցի իր ծախսով՝ յատկացնելով 600.000 թուման, Կարմիր Բանակին նուիրել է 250.000 թուման, ժեներալ Բալրամեանի անուան թանքային շարասենը՝ 500.000 թուման, պատերազմում զոհուած զինուորների երեխաների համար երեւանում բացուելիք մանկատան օգտին՝ 250.000 թուման։ Բացի այդ ազգին Հայրապետին ընտրութեան և օժման առթիւ նուիրել է ամերիկան և ինքուն շքեղ ավտոմեքենայ։ Որպէս յարգանքի նշան առաջարկում եմ այս մեծ բարերարին ընդունել նախագահութեան կազմում։»

Ժողովը Վեհափառ Հայրապետի այս առաջարկն ընդունեց բուռն ծափահարութիւններով։

Կարգացուեցին Սովետական Միութեան Գերագոյն Սովետի նախագահութեան նախագահ ԿԱՀԻՆԻՆԻՆ և Ռուսաց Եկեղեցու Պատրիարք Ամենապատիւ Ալեքսիին ուղղուած հետեւալ հեռագրների տեկստերը, որ ընդունուեցին միաձայն և խանդավառ ծափահարութիւններով։

ՍՍՌ-Մ Գերագոյն Սովետի նախագահութեան նախագահ

ՄԻՒԱՑԻ ԻՎԱՆՈՎԻՉ ԿԱԼԻՆԻՆԻՆԻՆ

«Հայկական Համազգային - Եկեղեցական ժողովը հաւաքուելով Ս. իշմիածնում և ստանալով բոլոր համարարութիւններն իր աշխատանքների համար, զաղանի քուէարկութեամբ միաձայն Ամենայն Հայոց Մատրիարք Պատրիարք և Կաթողիկոս ընտրեց ԳէՈՐԳ Արքեպիսկոպոս ԶէՈՐէՔԶէԱՆԻՆ։»

«Ժողովը իր երախտագիտութիւնն է յայտնում Սովետական կառավարութեանը ուշադրութեան և բարեհացակամութեան համար։»

Համազգային - Եկեղեցական ժողովի անունից

Տանն Կիլիկիոյ Կարողիկոս ԳԱՐԵԳԻՆ Ա.

Նորին Մրբուրին Ամենայն Ռուսիոյ Պատրիարք ԱԼԵՔՍԻԻՆ

«Հայկական Համազգային - Եկեղեցական ժողովը 1945 թուի Յունիսի 22-ին Ս. իշմիածնի նախագործութիւնում, գաղտնի քուէարկութեամբ միաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց ԳէՈՐԳ Արքեպիսկոպոս ԶէՈՐԷՔԶէԱՆԻՆ, որի մասին տեղեկացնում եմ Ձեզ։»

Համազգային - Եկեղեցական ժողովի նախագահ

Տանն Կիլիկիոյ Կարողիկոս ԳԱՐԵԳԻՆ Ա.